բեւեռեան Հայաստանում, չունենալով իրեն օժանդակ եւ աջակից գրականութիւնը, չկարողացաւ լայն ժողովրդականութիւն ձեռք բերել եւ դառնալ ամբողջ ազգի կամ գոնէ նրա ընդարձակ զանգուածների սեպհականութիւնը, այլ ամփոփուեց ու մնաց միմիայն Ղարաբաղի ու Սիւնիքի լեռներում, որով եւ նրա փորձերը ձախողեցին:

Ահաւասիկ Շահամիրեանին է պատկանում այդ երկու բաժան-բաժան շարժումները միացընելու եւ իրար հետ ձուլելու գեղեցիկ գաղափարն ու նախաձեռնութիւնը1):

ԳՐՈՒԹԵԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

«Որ. Փառաց»ից տեսնում ենք, որ հայրենիքի ցաւը եւ նրան դարման առաջարկելու միտքը երկար ժամանակներից ի վեր զբաղեցընում էր Շահամիրեանին: Նա փափագում էր «ամբողջ ազգի ականջին» անմիջականօրէն խօսել իրան այրող խոհերն ու մտածութիւնները, բայց գտնում է անհնարին, որ «մէկ մարդու բերանը կարողանայ խօսել մի ամբողջ ազգի ականջին» (130): Այլեւս ուրիշ ելք չկար, բայց եթէ գրչին յանձնել իրան զբաղեցնող խնդիրները, որպէսզի ազգը, տեսնելով իր շարադրութիւնը, «միտ բերի դուն ազատութեան, ճարն անճարի եւ հնարն անհնարի եւ գտանի ճանապարհ հեշտալի վասն ազատութեան» (23):

Սակայն եւ այնպէս երկար ժամանակ նա տատանւում է եւ գրել չի համարձակւում — նախ՝ համեստութիւնից դրդուած, որովհետեւ ինքը «փոքրիկն» է հայոց. երկրորդ՝ անպատրաստ լինելով նման մեծ գործի համար, վախենում է բերան բանալ՝ «երբեմն ծերերի ամօթից, երբեմն բոնաւորների երկիւղից եւ երբեմն հասարակ ժողովրդի նախանձից» (37): Նա երկար աշխատում է ուրիշներին գործի դնել, աւելի կարողներին եւ հեղինակաւորներին, մանաւանդ տեսնում էր, որ իր պէս շատերն են, որոնց սիրտը նոյնպէս «տոչորւում էր հայրենիքի սիրով» (22):

Նա շատ ջանաց յատկապէս մեր «վարպետներից» եւ դպիրներից ոմանց վրայ դնել այդ պարտականութիւնը, նրանց սրտում բարի նախանձ զրգռելով, բայց ապարդիւն: Ոչ ոք չի համաձայնեց նման մի պատասխանատուութիւն յանձն առնել: «Ես անկարող եղայ մեր վարպետներից ու դպիրներից մէկն ու մէկի նախանձը շարժել այսպիսի մի գործի համար» (112) — գրում է նա, դառն փորձերից յուսահատուած: Ամէնքն էլ, թէեւ «անձամբ բարեպաշտ եւ կատարեալ սիրով կապակցեալ ընդ ազգս մեր եւ ընդ աշխարհ հայոց եւ կարող ճանաչել զեղ տկարութեան մերոյ», բայց ամէնքն էլ հրաժարուեցին, բաւականանալով միայն «տխուր դէմքով հոգւոց հանելով» եւ գրանով ցոյց տալով իրենց «պատուական սիրտը» (37):

Բայց ազգի ցաւերն ու սէրը հանգստութիւն չեն տալիս նրան: Վերջ ի վերջոյ յուսահատ ամէնքից, որոշում է ինքը գրել, յանձն առնելով «թէ ծաղր եւ թէ ամէն տեսակ նախատական խօսքեր» (112), մանաւանդ որ գործի համար անհրաժեշտ փորձառութիւնը մասամբ արդէն ունէր: Իր կեանքի ընթացքում շատ բան տեսնելով, շատ բան լսելով, շատ բան կարդալով եւ լուսաւոր ազգերի մէջ ապրելով, նա իր սեպհական աչքերովը տեսել էր թէ ինչպէս «բարեպէս կառավարուող» երկրներում բոլոր դժուարութիւնները հեշտանում են. տեսել էր «ազատութեան պահպանման կարելիութիւնը» եւ այն «անխախտ միջոցները» — ինքը «անսիրծանելի որոգայթ» է անուանում — որ «բոլոր չարագործ եւ վատթար մարդկանց դարձնում են բարի գործողներ» (22):

Միւս կողմից՝ նա մտածում է, թէ իր եղբայրները, վաղուց հետէ օտարի լուծի տակ ապրելով, մի գուցէ արդէն ընտելացած լինեն իրենց ստրկական լիճակին եւ մոռացած «հընարն փրկելոյ զանձինս իւրեանց»:

Երրորդ կողմից՝ իրեն բարոյապէս պարտաւոր է զգում որեւէ ձեւով օգտակար լինելու իր հայրենիքին: Չլինելով Հայաստանում պաշտօնեայ, եկեղեցական կամ զինուորական, չլինելով նոյնիսկ սովորական քաղաքացի իր բուն հայրենիքում, նա գիտակցում է, որ ինքը որեւէ ծառայութիւն դեռ չի մատուցել իր ազգին: Դրա հետ միասին նա գիտէ, որ մարդուս կեանքը կարճատեւ է, մարդարէի ասածին պէս՝ 70 տարի. գիտէ, որ մարդը ենթակայ է բազմաղան փորձանքների ու պատահականու-

1) Լէօ՝ «Հայկ. Տպագր.» Բ.